

ԹԵՎԱԾՈՂ ԱՆԹԱՐԳՍԱՆԵԼԻՆ - ԲՈՒՅՐ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ [Մարսել Պրուստ]

[1] Ես ընթերցում եմ հոտով, ընդ որում, կարևոր չէ ժամանակը՝ ե՞րբ է ընթերցվելիքը տպագրված: Հոտով ես ավելի լավ եմ ըմբռնում ընթերցածս: Պրուստին ես հասկանում եմ հոտով [հմմտ.համով]: Անհնար է հոտը կամ համը թարգմանել: Բայց կարելի է ներսյութելիացման հասնել-թարգմանվել այն բանի մեջ, ինչը ուզում ես հոտառել կամ համտեսել: Բուրոզ ու բուրումնավետ հեղինակները քիչ են: Այս մասին խոսում է Կորո Աբեն:

Խոտի հոտի-բուրմունքի անանցությամբ ես սիրել եմ գրականությունը, որ փթթանքի մեջ կնոջ գրավչությամբ է՝ ուզում ես հասկանալ առանձնապես ո՞ր հոտն է ստիպում ինքնաբերաբար հպվես նրան - ինչ որ բան մնում է չհասկացված:

Ամերբանկատ միջամտումը [երբ պատահումների բարեհաճումը չես առել, որպեսզի անցյալը հիշես առանց ինքդ քեզ ընդհարվելու, այլ դառնաս մարմնիդ կողմից հիշվող-թարգմանվող բանական գոյացություն] հիշողության տասը փուլ՝ հյուսքաշերտերի մեջ քեզ զգացնել կտա սոսկ կցկտուր, անփույթ կցմցված տեսիլներ հայտնվածո՞ տեղանքում - տեղանք, որ բուրում է: Հետո հեզնելու ես ջանքերդ, որ առանց պատեհի հանգամանքների բերմամբ բռնի ներխուժել ես կցկտուր թարգմանվող այդ տեղանքը ու հակադարձումը ստացել. լավագույն դեպքում մտաբերում ես Պրուստից մի նուրբ հոգեզննում, որ առնչվում է հոտին ու համին:

Հեռագատված-անդառնալի օրերից ետ բերել-կտրել ու սկեռումի առարկա դարձնել... համը: Կարկանդակի ու թելի համը՝ խառնված բերկրաբեր մի զգացողության հետ՝ ինչպիսի՞ առեղծվածով է բացահայտում կյանքի կապը իր հակոտնյային՝ մահին, որ հիշողությունը ոչինչ չի փորձում ձեռնարկել, այլ լցվելով իր կցկտուրությամբ, լիցքավորվում է ներսումդ ու պայթում հենց մահից առաջ, վերարթնացնելով, թե ան-

նրբանկատ էր միջամտումդ՝ ի՞նչ զուր ջանքեր էիր գործադրում՝ հասկանալու համի և հոտի փիլիսոփայությունը:

Սա ինքնին է բացվում, ինքնին է **թարգմանվում** մահվան ժամին, երբ անցումն է անէության՝ թողնելով, որ քեզ որոնի հոգիդ՝ իր մոգական մակագրությանը ճանաչի ապրածդ օրերի ծաղկաթերթերի վրա: Կամ՝ այդ հիշողությունը ընդվզում է. ինչպե՞ս է, որ թույլ ես տվել՝ համ ու հոտ առնելու «**զգացումիդ միջի**» թեյից ու կարկանդակից, ու դա շփոթել իրական թեյի ու կարկանդակի հետ, որ ծնել են այդ զգացողությունը:

Ասեմք, առվուտի կամ մի ջրաբույսի բույրից, երբ խոսում եմ, թվում է՝ դա զգայարանքիս մեջ ինչ-որ խոնավությունից է ծնվել, ու հավատում եմ, թե կան **խոնավ** զգացումներ, որ ինձ ոչ թե դրսից են հասնում, այլ աննշմար ձևավորվում են իմ մեջ:

Պատկերացումը, թե ես **հոտ եմ առնում լեզվով**, դառնում է այնքան ռեալ, որ որոնում եմ նմանություն կոմոդյան վարանների հետ, որոնք տարբերվում են որսի իրենց տեխնիկայով: Նրանք չեն կառչում զոհից այնքան, մինչև սա ուժասպառ լինի, արնաքամվի, ինչպես անում են մյուս գիշատիչները: Ատամի մի խոր խածվածք, եթե նա թողնում է որսի վրա, այս զոհացուի հնազանդումը ճակատագրին պատրաստ է: Ատամը իր սրակեռերում պահում է սպանող բացիլ, որ լորձունքի հետ անցնում է վերք ստմացածին: Վիրուսակիրը մահացու թափանցում է արյան մեջ: Մի երկու օր և արնավարակից սատկածը իր հոտով հուշում է՝ որտեղ է ընկած ինքը: Մի քերծվածքի այսչափ վտանգավորությանը չկասկածող զոհը շունչը փչում է: Նա սպասում է իրեն հոշոդին: Վարանը **հոտը առնում է լեզվով**՝ երկարավուն երկծայրված, իր տատանումով օդի մեջ հոտեր տարբերակող:

Իմ հիշողությունը այսպես է վարվում ընթերցածս նյութի հետ: Սկզբում անդամալուծում է, խախտում, կազմատրոհում նրա նյարդային համակարգը: Հիշողության «բացիլից» ընթերցանյութի քայքայվող հյուսվածքները որոշ ժամանակ ազատ են թողնում ինձնից: Ընկալունակ սրությամբ ընթերցածիդ հետքը գտնում ես հետո: Ես անմիջապես չեմ կառչել ո՛չ Պրուստից, ո՛չ Տոլստոյից, չեմ ցանկացել հատուկ հիշել՝ ինչ եմ ընթերցում: Թողել եմ «բացիլը»: Օրեր անց այդ վիրուսային մանրէն ինքն է իր ետևից տարել իմ լեզուն: Այսպես, իմ հիշողությունից «քայքայվածների» թվին նայելով, երբեմն ուզում եմ բացականչել՝ որքան եմ կարևորում ձեզ լեզվիս զոհ գնացածներ:

Բայց ես կուզեի սա նույնացված տեսնել Պրուստի հիշողության աննախադեպ ծավալումների, նրա այն ներքին բացահայտումների հետ, որոնք մինչև վերջ, կարծում եմ, բացառված է մանրազննված տեսնեմք: Նա ի՞նչ հնարքով է արտաքին դրդապատճառներին անտեսանելի շրջադարձումի հնարավորություն թողնում, որ կյանքի հանդեպ մեր

անմիջական ապրումների մեջ ուրվապատկերվում է մի ուրիշ աշխարհ, ինչը խորհել է տալիս՝ ինչ-որ մի բան կա այս կյանքում, որ ես չէի հասկանում ու չեմ հասկանում [Տոլստոյ]։ Նա ինչպե՞ս է հիշողության մի ինքնակեղեքումից՝ հաջորդի սկզբնավորումը այնպես կանխատեսում, որ մի աննշմար մանրամասնի մեջ բաց չի թողնում, թվում է, **լեզվով հոտ առնելով** է նախագգում տվյալ դարձվածքի ու արտահայտության ծավալումի անխուսափելիությունը։

Ինչքա՞ն հիշողություններ պետք է **փորել** մի գրամ մոռացում **պեղելու** համար։

Մոռացումը՝ մոռացում է, բայց **հիշվող** մոռացում։ Հոգեբնյութում ոչինչ չի օքսիդանում։ Հիշվող զգայատարրը ի հաշիվ այն **մոռացված-մնացորդի** է, որ պատրաստ է իր ունեցածը զիջել հիշողությանը՝ պայմանով, որ մոռացումից գողացված հիշողության ինքը տեղյակ է։ Այնպես չէ, որ որևէ բան իսպառ ոչնչացման է ենթարկվում։ Ընդհակառակը. որպեսզի մենք հավերժորեն խորասուզված չմնանք արտաքին ու ներքին աշխարհների փոխշփումը հասկանալու անգիտության մեջ, մոռացումը պետք է իր հակադարձումն ունենա։ Այդ հակադարձումից է ձևավորվում հիշողությունը։ Այսինքն՝ իմացյալ մոռացումը ինքը հիշողությունն է։ Ինչ-որ բան մտապահելու համար, ինչ-որ բան մոռանալ է պետք։ Կա՞ մոռացումը, կա և հիշողությունը։ Առաջինը զոհաբերվում է երկրորդին, երկրորդը զոհաբերվում է առաջինին։ Չոհաբերական գրեթե աններթափանցելի ակտ է սա, որ կատարվում է մեր ուղեղում։ Ես ոչ մի նշանակություն չէի տալիս՝ Պրուստը համի՞ մասին է խոսում, թե՞ հոտի [կարկանդակի և թելի]։

Նմանօրինակ զուգորդությամբ են վերլուծական լիցք առնում Պրուստի լեզվական հերձումները՝ համի տեղը չզբաղեցնելով այնպես, որ հոտառական ընկալումները տեղ չունենան։

Հոտը [իմտ. համը] փիլիսոփայությունից ուժեղ է։ Մի սոցիալիստ [միանգամայն տեղին վերհիշելով կանխում է ինձ Կոբո Աբեն՝ չփորփրեմ ավելի պատեհ օրինակ ձեզ մատուցելու համար] ինչքան էլ ընդունում էր կորեացու ոգին ու կենսակերպը, չէր կարողանում հանդուրժել նրանից եկող լշան[՝ հոտը։ Հոտը հաղթեց սոցիալիստական գաղափարին։ Եթե հնարավոր լիներ հոտային, կամ համային հյուսվածքը քայքայումի ենթարկել ու բերել այնպիսի սկզբնատեսքի, երբ չենք կողմնորոշվում՝ համի պարունակության մեջ որտե՞ղ է մոռացված հոտը, կամ հոտի նախընկալման մեջ որտե՞ղ է մոռացված համի հիշողությունը, հնարավոր կլիներ նաև ինձ համար բացահայտելի՝ ինչու ես նշանակություն չէի տալիս՝ Պրուստը համի՞ մասին է խոսում, թե՞ հոտի, որովհետև անթափանցելի մի բան կա նրա բերկրանքի մեջ, որ «մաղխեն» կարկանդակի

ու թեյի համ ու հոտից սկիզբ էր առնում, ծավալվում ժամանակների հոսքով ու հասնում իրեն:

Դյուրորեն ներծծված հիշողության մեջ, բայց դժվար արտահոսող [մեկնաբանվող] համի առաջ Պրուստը խոստովանում է փիլիսոփայության անգործությունը: Հիշողությունը մի վայրկյանում դառնում է այն, ինչ դառնում է: Սոռաբուի համար ողջ կյանք է պետք, որպեսզի չհիշվի:

Երևութական արտահայտությամբ այն տրոփում-տեքստային զուգորդումները, որ ծնունդ են առնում հոգու անմիջական պոռթկումից, ուղղորդվում են սկզբում, կարծես, հասկանալի, պարզ մի պայծառացմամբ, ինձ կասկածելի են թվում, թե պարզության մեջ են հյուսված: Արտաքին աշխարհից անջրպետված խորհրդավորությամբ, մթին կացարաններից են Պրուստի այդ համային ու հոտային հիշողությունները հայտնվում ինձ: Եվ ինչո՞ւ պետք է պարզ լինեն: Ու այստեղ սկսում է գործել Պրուստի հիշողական վերարտադրումների մեխանիզմը՝ որպես բարդ մի ուստայնային համահյուսվածք ներկայացնելու նրա ջանքը: Այն, ինչ հիշում է Պրուստը, իր երևութական արտահայտությամբ, ինչքան էլ ինձ հասանելի լինի, հիշողական տարրերը իրենցից թողնում են զգայական բեռ, հուզական զարկերակի անհամազատություն, ինչը պարպվում է հիշվող երևույթի առանձնազատումների մեջ՝ ո՞ր հատվածում է համը, ո՞ր հատվածում է հոտը, ծայնային հիշողությունը, կամ շոշափելիքի մտապահածը: Բարդացումը այդ ամենի միաժամանակյա ընկալման հնարավորությամբ է պատճառաբանվում: Ստացվում է՝ հիշվող առարկան ո՛չ համ է, ո՛չ հոտ է, ո՛չ ծայն, ո՛չ շոշափվածք, այլ լեզուն ինքն է, լեզվով վերապրելու մարմնականություն:

Համագզաց կամ հոտային ընկալումը առանց աղճատելու, եթե կարողանայինք թողնել արտահոսի դուրս, կբախվեինք այնքան մի երեքուն հոգեվիճակի, որ չէինք փորձի զսպել այդ ընկալման անմիջականությունը՝ գիտակցելով հաճելիի և անհաճի շուրջ մարդկային տարածայնումների առկայությունը:

Արյան սպսմացող վարակը ինձ հասցրել էր անհուսալի մի սահմանի՝ կյանքի ու մահվան արանքում: Երկու-երեք ամիս բուժում ստանալուց հետո եկավ այն օրը, որ պետք է դուրս գրվեի հիվանդանոցից: Ծնողներս եկել էին ինձ տուն բերելու: Մեքենայի մեջ չգիտես ինչ անցավ մտքովս՝ վերցրի ու սկսեցի հոտ առնել իմ այն շորերից, որ տեսել էին մահվան քրտինք, ներարկումներ, օրհասական ջերմություն, տեսել էին հուսահատություն ու հույս, սրտնեղություններ ու աստիճանաբար ապաքինվելու թաքուն նորախություն: Ու ի՞նչ զգացի, երբ շնչում էի իմ անցած հիվանդությունը: Մի տեսակ կաթնա-անտիբիոտիկային ոչ այն է՝ բույր, ոչ այն է՝ հոտ: Դա ես կարող եմ համեմատել ջերմությունից քրտնած մանկան միակ կերակուր մայրական կաթի ու իր անապակ մարմնից

առած խառը մի զգացողության հետ, որ միայն հոտ չէ, որ միայն համ չէ: Այնքան հարազատ թվաց դա ինձ, որ եթե վերադարձնեին Նորից ինձ դեպի իմ անցած հիվանդությունը, դեպի հիվանդանոց, ես կվերադառնայի: Հիմա հասկանում եմ, որ այն ժամանակ ես կռահել էի նույնը, որ տարիներ անց պիտի զգայի Պրուստից՝ ընթերցումը **լեզվով** վերապրելու մարմնականություն է, որ անցյալում այդքան գիտակցված չէր կամ այն ժամանակ, առավելագույնը, ես դա կբացատրեի մեր քիմքում կատարվող պրոցեսով **լեզվաթաղանթի** ու ռունգերի գրգռագեղձերի շնորհիվ:

Հակաբորբոքային դեղանյութը, կարծում եմ, այնքան էլ բերկրաբեր բան չէ, բայց ինչպե՞ս է մնացել կաթնահոտով ալիքվող գիտակցությանս մեջ այն հոտն ու համը, որ այդ դեղանյութը երկամսյա բուժումներից հետո թողել էր հիվանդանոցային հագուստիս վրա: Անցել է գրեթե քսանհինգ տարի-հիշում եմ կաթնա-անտիբիոտիկային հաժույքը:

Հուշի կծկուն-սեղմվող հարափոխությամբ օժտված ընթացիկ մտապատկերները սկսում են վաճել, վերածվել հակակրեյի մի ապրումի, խոնավացնել բերկրանքի զգացողությունը և երկտասնամյա այդ անցյալում սեփական ես-իս օտարվածությունն է տարտամ կերպավորվում, երբ համակվում եմ, միաժամանակ, ցավի միջից հիշվողի-անմոռացի նույնպիսի մի առկայությամբ, ինչպես բերկրանք բերող հիշողություններն են:

Խորքից ծուլորեն բարձրացող ցավի միջից այդ անմոռացը հորդորում է դեմ գնալ իր ժամանակին հուսահատեցնող-տհաճությամբ կաշկանդող ապրումին:

Գուցե, չափազանցնում եմ, բայց փչացած ատամների հոտը նույնպես հրապուրիչ բան ունի իր մեջ, որ ուզում ես զգալ ու ներշնչել, շարունակ ներշնչել այդ հոտը [Կորո Աբել]:

[2] Սնահավատությամբ, թե՛ ինքնապարտադրմամբ մի այնպիսի զգացումով եմ զանված մնացել անբնական մի կռահումի, թե ես վախ ունեմ չափազանց գայթակղեցնող բույրերից, քանի որ դրանք կարող են իմ մեջ արթնացնել գրգռումին չդիմանալու անհսկելի ագրեսիա ու կարող է ավարտվել բռնությամբ հենց այն բանի վրա, ինչը ինձ այդպես հմայում է, փոթորկում անհավասարակշիռ հուզականությամբ, կարող է հարձակվել տալ՝ խեղդելու այն բույրը, որը այդպես ինձ խենթացնում է:

Նման մի բան կատարվում է Սելվիլի կետորսների հետ: Զաղցրաբույրն ու հոտ անվանվածը իրենց բառային-իմաստային առանձնազատումներում սոսկ պատահական ծավալում չեն ստանում: Հոտի մեջ կարող է լինել անդուրը-անախորժելին, ինչը որ վանում է: Բայց բյուրեղությունն ու հոտը միախառնվում են մի վայելումի մեջ, ուր հիշողությունը աստիճանական ուժգնացմամբ ներծծվում է մետաֆորով՝ հստակ

չտարբերակելով հոտը բույրից: Դրանք մաշկիդ մեջ ներծծված մի բան են դառնում՝ թերևս մաշկի հիշողություն: Ձեռքերին ստելը հեշտ է: Սնուցիչ մի բույր, հրաշագործող քաղցրաբուրության մի սրվակ ու, թվում է, հոտավետ կդարձնեն ոճիրը, կմաքեն այն սահմակեցնող հիշողություններից՝ զամելով իրենց հրապույրներին: Ձեռքերը գուցե մի հոտավետ գտվածքով խաբես: Հիշողությանը՝ ոչ: Արաբիայի բոլոր անուշ բույրերը չեն կարող երբեք այս փոքրիկ ձեռքը հոտավետ դարձնել: Լեդի Մակբեթը **ձեռք** է ասում [հմմտ. շոշափելիք], բայց նա, հայտնի է, որ արյան հոտից էր խենթացած: Հերման Սելվիլի կետորսները դեռ ամբողջովին չմաքրված ծարպախառն արյան հետքերից, կետի աղիների նեխահոտով անտառների իրենց ձեռքերը մխրձում էին սպերմացետի մեջ, որ կետի գլխուղեղային անուշաբուրող զանգված-հեղուկ է: Նրանք ծրագուներից դեռ չմաքրված անուշահոտում էին, հոտավետ էին դարձնում իրենց ձեռքերը: Դա նրանց համար [բացի նրանից, որ այդպես սպերմացետի գուլձերն էին տրորում, որպեսզի հումքը չսառչի մինչև իսկական կետայուղ դառնալը] ենթագիտակցորեն մեղքերից, սպանություններից, կետորսական կյանքի անմաքրություններից մաքրագործվելու բերկրաբեր պահ էր: Լայնաթիկունք այդ մսագործները կես ժամ չպնցած, կարող էին մեծագույն ատելությամբ ու ոխով, նույն հոտավետ ձեռքերով հարպունը խրել նավեզրին հայտնված կետածկան մեջքը, ծագ լիներ թե մայր: Բուրեղ ավիշից զրկված-սմբած ծաղկացողունները, որ անտարբեր դեն ենք շարտում, ինչո՞ւ են տարբերվում իրենց միջի թանկարժեքը մարդուն թողած կետերից, որ կեր են դառնում մանր ու մեծ ձկներից: Եթե ավելի ուղղակիորեն արտահայտվեմ, առանց տեքստային միջնորդվածության, կարող եմ ասել. Պրուստը ի տարբերություն Սելվիլի, իր ձեռքերը անուշահոտում էր իր իսկ գլխուղեղում՝ իր հիշողությունների մեջ, որպեսզի չոճրագործի: Սելվիլը մաքրվում է արդեն մեղսագործածից՝ մինչև արմունկը սպերմացետի թողած հիշողությամբ մանուշակահոտ հիշեցնող բույրով: Նույն մանուշակահոտը ավելի շատ մետաֆորիկ դեր է կատարում Պրուստի մոտ: Հիշողության բերանն ընկած գլուզվելով, մոլոր-մոլոր բարձրանում են գրգիռով բուրյան խոտերը՝ սզնիի բուրավետությամբ նախ և առաջ և զանազան ծաղկունքից զատվածը, ասես, օդի մեջ լուր են տարածում, թե ներծծված են եղել աստվածներով: Այդպես ծիսախոտերի այրումից բարձրանում էր թևածող անթարգմանելին՝ գուշակության ինքնամոռաց գալարումների մեջ գցելով դելփյան քրոնիկներին: Անբացատրելի մի կախարդանքով արթնացնում է տարաշխարհիկ զգացողություն, թե հիշողությունից չջնջվողը տեղայնացված հոտն է-բույրը: Պրուստը այս տեղայնացվածից է գալիս: Սելվիլը՝ ոչ, թեև մելվիլյան մտապահումը

նույնքան առարկայական է: Տեղայնացված է ու այդքանով մետաֆորիկ՝ Պրուստի դեպքում: Օվկիանի անեզրության մեջ տրոհվող ու այդքանով տեղայնագերծ՝ Մելվիլի դեպքում: Պրուստը մոգական կապվածությամբ տեղայնացվածին [սզնիների այն անմոռանալի բուրումին], փնտրում է գրականությունից անդին մի բան, որ կարողանա փոխանցել ընթերցողին ու բախվում է նյութական արգելքին իր և՛ գրականության միջև, իր և՛ ընթերցողի միջև, բախվում է անհեթեթության. ինչպե՞ս կարող է այդ թևածող մատերիան, այդ նուրբ-անզգայելի տարերքը [բույրն ու հոտը], այդ բուրեղ նրբիությունը առաջնորդող դառնալ այն աստիճան, որ նյութական աշխարհի միակ իմաստավորողը՝ մարդը, ավելի շուտ դառնում է բույրերի շնորհիվ **թարգմանվող**, քան նրանց մասին պատմող:

Ցնորեցնող հոտի ու ուժի միջև տարածությունը լցված է Պրուստի բուրմունքով: Զարմանալի չէ, որ նրան ընթերցելիս, առաջին բանը, որ ուզում եմ հակադարձումով դիմավորել՝ թույլ չտալն է, որ այդքան բուրումնավետը ինձ մղի ոճրագործելու, ինչպես Զյուսքինդի Գրենույին է մղել: Վատ հոտը [Մելվիլի «Մորի Դիկուն» «ժարպախառն արնահոտը»] ինքնապաշտպանական ռեակցիայի է տանում: Բուրումնալիս բաց է, և գայթակղում է ինձ իր դեմ մեղանչելու:

Ով սպառում է ահռելի ծիգեր կեցության անորսալիության գիտակցման մեջ՝ պահպանելով նախախնամական խաղաղություն՝ չտրվելու աշխարհի գայթակղումներից, կրքի փոթորկումներից, նա չի կարող **սահմանազանցել**, ինչը նույնն է, թե ոճրագործել, որովհետև անորսալիորեն ամենաամենեղ հրապուրամքը կարող է մղել մեղսագործումի, ներխուժող-տարերային զուգորդումներով ծաղրել տրամաբանության հուսալիությունը, որ անվտանգ է կարծել փոքր հրապուրների խաղը: Ինչը որ սնուցիչ է ամենեղ գայթակղության՝ կխժռի ինքն իրեն, ինչպես Զյուսքինդի Գրենույն է:

Բույրի մեջ կեցության նույն անորսալիությունը կա, որի խռոչում ներսուզվածը կտեսնի իր հուսահատությունը, թե ինչքան խոցելի է ինքը՝ երազի և իրականության շփոթումից, մահվան գիտակցման մեջ լինելուց ու, միաժամանակ, կյանքին իր կառչումից, կենդանի գույն ու վերանցական վիճակը տարրորշելու անզորությունից, երբ դողում է զգայարանքիդ թաքնախորքը, բույրի ու կեցության անորսալիությունը հաղթահարելու տենչը: Անօգնական, անզոր մնալու երկյուղից բույրի անորսալիությունը ամփոփվում է իր մեջ ու հավանական դարձը [նորից վերապրելու անորսալիության թախիժը] մնում է անվերարտադրելի, որքանով առաջին անգամ ապրվածը վերադարձ չունի, այլ փայփայում է այդ տենչանքը մեղամաղձով սանձահարված թողնել-թողնել անձկության մեջ:

Միակ ուղին երաժշտության և բույրի միաձուլումն է, որը մեկամաղձ վերանցումն է նյութական աշխարհից, դեռևս անհայտ զգացումների եզրով հալվելն է մահվան հեշտալիությանը: Մի բան մինչև չսպառովի-չմեռնի ինքն իր մեջ, չի բուրի: Նույնպես և երաժշտությունը: Այստեղ է, ահա, իրականանում Հայունը:

Թափ առնող խոյանքի պես երևույթ է, որ ցնցում է: Ժանաչած նյութական աշխարհի պատրանքայնությամբ մղվում են բուրմունքների և երաժշտության ինքնայրույնի պես թևածող մատերիայի վերանցումն ապրելու՝ երևութական գոյելու ու մեռցնելու համար իմ մեջ այն ամենը, որ նյութեղական է: Անզույգ մի խանդաղատանքով ինձ եթերացնեմ՝ իրիկնային տամուկ օդում բուրող վարդի հանգույն՝ իմ շուրջ սփռվող երաժշտությամբ ցնորված:

Հոտի և ծիսական պաշտամունքային մերձությունը բացահայտվում և մատուցվում են մեզ թրթռումների, տրոփյունի, սրբազան դողդողանքի այն վայելչական ժամին, երբ համբույրն է դառնում միակ պատասխանը [պաշտամունքային կուռքին թե սիրելի էակին]: Ահա ինչու են այդպես կապված, ու այդ կապվածությամբ առավել են արթնացնում աստվածային զգացումներ բուրմունքն ու ծիսական ժեստը, բուրմունքն ու երաժշտությունը:

Ինչքան էլ ցանկալի լինեն շուրթերը, վանում են, եթե Կոբո Աբեի հիշեցումով՝ հոտը հաղթել է գաղափարին: Սվանը [«Սվանենց կողմերով» վեպում] ինչքան անգամ նվագել էր տալիս իր սիրելի Օդեթին Վենտոյի սոնատից դաշնամուրային մի հատված, այդքան պահանջում էր չընդհատվեն իրենց համբույրները:

Ես պետք է սրբագրեմ ինձ – բույրը ոչ միայն պետք է խեղդել, այլև՝ համբույրներով խեղդել: Անմոռանալի բույրերի ու երաժշտության համակվածությամբ Սվանի և Օդեթի համբույրները՝ մեկմեկու այն հուսադրումով էին, թե չկա աշխարհի ունայնություններից մի պահ մոռացնող երանություն, քան սիրո զեղումները ամբողջացնելն է համբույրով: Համենայն դեպս՝ տարփանքով համակող չեն, ցանկամոլության գայթակղեցնող չեն, այլ մեկմեկու շուրթեր շնչելու, մակերեսային հեշտանքը ավելի վեհ ու աներևույթ մի բանով փոխարինելու տենչ, քանզի համբույրի ձայնը «լսվում է» շուրթերից ներս, որոնք շնչում են այդ համբույրը ու բուրում են նրանով, ինչպես երաժշտության լեզուն է բույր առնում նյութեղեն ակունքից ու վերածվում թևածող անթարգմանելիության:

Պատերազրեք խորհրդանշական մի տեսարան, որ պահանջում է դեպքերի ոչ բարդ ընթացք ու ֆաբուլային հաջորդականություն, ու ըստ այդմ՝ ենթարկված է տրամաբանումի, նկարագրությունները որոշակի շարահյուսական-քերականական կարգ ունեն: Նույնիսկ այդ ժամանակ հնարավոր է՝ նման խիստ կարգավորվածության տակ քողարկել ներքին

մի այլ իմաստ, որ ներհյուսում է տեքստի բոլոր երաժշտականության հետ, ինչից ողջ շարահյուսական խստությունը թվում է **թևածող անթարգմանելի**-արտաքին «հասկանալի» տակ բորբոքվող բույր, որ ստիպում է նուրբ դիտողականության մի ցատկով հասնել այդ բուրրող տեքստի ակունքը ու նրա առկայծուն խորքերից հասու դառնալ կեցության անըմբռնելիության թախիծին:

Հոտը, որ պարուրում է ինձ երաժշտության և իրիկնային տամուկ օդում վարդի բուրեղ միախառնումից [խորհրդանշական տեսարանը Վերդյուբենների տանն է «Սվանի սերը» վեպում] համապատասխանում է տեքստային բովանդակությանը՝ բառերի, ձայների, փոխաբերությունների, համեմատությունների ոճային ծավալումների բովանդակումին, Պրուստի շնչառության ընդհատ-ընդհատ ինքնավերադարձի տոնայնությանը, որով պայմանավորվում է բուն տեքստի ներքին ակտիվությունը [Վալերի]: Հոտը, որ ես առնում եմ տեքստից՝ ա՛յն հոտն է, որ շնչելով Պրուստը ցնորել է այս տեսարանը: Փոխանցվո՞ւմ է ինձ այնպես, որ ռունգերս բուրմունքը **լսեն**, և ունկերս երաժշտության **հոտոտելիք դառնան**: Չէ՞ որ տեքստից հոտ առնողին ավելի շատ առաջնորդում է զգայական շփոթմունքը, քան սովորական-առօրյա ընկալողական ռեֆլեքսիաները: Բույրի ամենանուրբ տատանումները, հիշողության մեջ այդ տատանումների անորսալիությունը ու այդ անորսալիի ետևից թևածումը՝ անձկանքի ու բերկրության մի խորհրդավոր շնչով են մեզ մերձեցնում **աստվածային շփոթմունքին**: Այստեղ միաձուլված են հոտն ու համը, այստեղ հոտ են առնում **լեզվով**՝ բուն մտապատկերների այնպիսի վերարտադրումներով, որ պատմելը, նկարագրելը դեմ է առնում երաժշտության և բույրի չտարբերակվող ծուլքին:

Բույրը ցնցում է օդը, ինչպես երաժշտությունը: Բայց այս ամբողջը փոխանցվում է ինձ, որպեսզի ես էլ ջութակի և դաշնամուրի ձայնակցմամբ հագեցած իրիկնային տամուկ օդում՝ որսայի նյութեղեն սկզբնաղբյուրից անջատված [երաժշտական գործիքից կամ որևէ օժանելիքից] օդում թևածող աննյութեղենը, **թևածող անթարգմանելին**, երբ ձայնը դառնում է բույր, իսկ բուրմունքը այնպիսի հնչյունակցությամբ է տարածվում, որ ձայնավորված մեզ ներսուզում է իր մեջ: Ինչպես ամենակատարյալ երաժշտությունը զմրուխտային թավշությամբ ալիքվում է լսելիքիդ մերձակայքում ու ոչ ամբողջովին է լսելի: Նման ջրաբույսի տատանումին, որ կառչած մուգկանաչավուն մամուռներով առվեզրին, ծուլորեն դարձդարձվում է մանրիկ ալիքների հպումներից: Ամեն մի հպումից իր անունը լսելու զվարթությամբ այդ ջրաբույսը թեքվում է ու ականջ դնում ալլակներին, և նույնքան ծույլ սահունությամբ մտափոխվում է մեկ ուրիշ խայտանքի կողմ:

Բույրի և երաժշտության միջև այս դարձդարձիկ ունկնդրումը Պրուստի հմայքն ու հիացքն են:

Պրուստի լեզվի «հոսունությունը» զարմանալիորեն մասնատված է այնպես, որ ինձ շնորհում է անվերջորեն մասնատման մեջ մտնելու շարունակականություն (Վալերի): Երբ ներքին հուզականությունը ընդհարվում է լեզվի միջոցով իր արտահայտվելու պրոբլեմին, մի դիտավոր դիվոտությամբ կառչում է նրանից, թե կարելի է հենց անհնարը արտահայտել՝ ներքին կեղեքող, ավեկոծող ապրումների պարադոքսային հակազդումից չխուսափելով: Որքան անհնար է հուզապրումների արտահայտումը, այնքան մի հրաշափոխմամբ ներսուզվում ես թևածող անթարգմանելի մեջ՝ որոնելով բույրի և երաժշտության միախառնումի գաղտնիքը: Տարօրինակ է, բայց նրանց առեղծվածային քողվածքը, ուր Մի են դառնում բույրն ու երաժշտությունը, բացի հրապուրանքից ծնում է գոյի անցավորության հանդեպ խղճահարություն:

Որովհետև նույնիսկ կեցության անորսալիությունը չի կարող բույրի և երաժշտության պես անսովոր զգացումների հոմանիշը պարունակել և հուզաշխարհից արտագեղվողի համար գտնել մի այնպիսի լեզու, որ բովանդակի նույն թևածող անթարգմանելին, ինչը ապրվում է ներքնապես ու բանականությամբ քիչ հսկելի է: Այն հույսը, որ բույրի և երաժշտության հարուցած անթոթափելի թախծությունը իր արտագեղման հետ կհանդարտվի, հակադարձումով է ավարտվում: Սլացիկ ու վեհաշուք վերհառնումից հենց ինքն է հուսահատվում:

Գտնված արտահայտչաձևը երկյուղում է իր ավեկոծումից: Նշմարելու համար անորսալի տեղաշարժը դեպի լեզվաշխարհ տարօրինակ զգացողությամբ է համակում և ուզում ես հարցնել.- մի՞թե բույրը և երաժշտությունը այս աշխարհից կարող են լինել:

Հպումը մեղեդայնության ու բուրումների աներևույթ եզրագծին, ինչքան զմայլանքով է մտքի թռիչքներ երագել տալիս, նույնքան հիասթափեցնող է: Ետ է մղում մի գոլ հոգեվիճակի: Գորշության կանխագագմամբ՝ բույրի և մեղեդու խառնվածքը արտառոց պարունակով, չես ուզում արտահայտում գտնի, վերածվի լեզվական խեցու, չես ուզում վստահել աշխարհին: Բացատրել երաժշտությունը, նույնն է, թե պարել ճարտարապետությունը [ո՛ւմ միտքն է...]: Սա առնչվում է նաև բույրին: Նրանցից «մի կտոր» է մեր մեջ տրոփում:

Ստածության մակերեսում հնարավոր է մեղեդայինն ու բուրումնավետը պատմել սկզբից մինչև վերջ [եթե հնարավոր է], բայց խորքում նոսրանում են այդ կանոնական բաները, ու մնում է «մի կտոր» նրանցից: Այս մասին էլ և խոսում է Պրուստը:

Ջուտ որպես հոտ [արոմատ], եթե ինձ հայտնի լիներ ամբրայի, գլիցինիայի, լորենու ծաղկաթուրմի այն տեսակները, որոնց մասին

խոսում են Մելվիլը, Ֆոկսները և Պրուստը, մի՞թե դա կարող էր օգնել ինձ, որ ես դրանք համադրեի զգացական-ընկալողական փորձառությանս հետ, ու արթնացնի հիշողությանս բեկորների միջից հենց նույն ամբարն, նույն գլխիցիններ, նույն լորենու ծաղկաթուրմը - այն դեպքում, երբ ես այդ բոլորը տեքստերի միջոցով եմ երևեցնում ներառել իմ մեջ: Ինչպիսի՞ն է նրանց հոտը եղել անցյալ ժամանակում, ոչ միայն ինձ, այլև մարդկության մեծ մասին այժմ անհասանելի է:

Մի որմնախորշի մեջ եթե արմատ է ծագում մի պատատուկ, մեծ սիրով հրավիրում է ինձ՝ այդ պատի երկայնքով աճած նրա կանաչ տերևներին հետևեմ: Ինձ չի հետաքրքրում փխրուն-բարենպաստ հողը, որից այն աճել է: Ես կառչում եմ անհյուրընկալ այդ մի խորշից, ուր բուսական զգուշությամբ արմատակալել է պատատուկը: Ահա, այդ մանրուքը, որ ինքնին ոչ մի բան է, ո՛չ պատերազմական լայնակտալ տեսարան, ո՛չ մեծ դժվարությամբ հայթայթված աղմկահարույց սպանություն վիպական մանրամասներով, ո՛չ դեպքեր ու գործողություններ, այդ մանրուքային «անտեսվածը» հայտնվում է ինձ որպես վեպին արժանի շատ լուրջ մանրամասնություն: Գրողի հազվագյուտ բացահայտմամբ սկսում է ինձ նույնքան լարված լինել, ինչքան տոլստոյական բացահայտման եմ ականատես լինում: Պրուստը ինձ սևեռում է հենց այդ պատատուկի նկարագրության վրա: Առօրյա սովորական բաներից հանձար է ծնվում: Նախանշված հավասարակշռությամբ եթե երկու կողմերում հայտնվեին Պրուստը և Տոլստոյը [որ նկարագրության համար առանց կողմնակի հումք ունենալու չէր կարող, առանց դիտարկված-կանխորոշած պատմատարրերի ներմուծման [Վալերի] չէր կարող] երկկողյա հավասար բաժանմամբ, ես կառանձնացնեի Պրուստին, որ չդիմելով խռովահույզ գործողությունների [որի դեպքում խիստ նրբանում է իրեն ընթերցող «գամելու» գրողի խորամանկությունը], նկարագրում է որմնախորշի պատատուկը՝ հույսը սոսկ իր երևակայության վրա, կրկնում եմ, առանց պատմամշակութային հումք կուտակելու նախապատրաստության: Թեև հանձարը մնում է հանձար, և դա բոլորս գիտենք:

Պրուստը «իրերի պատից» պատկերացումներ է կախում և փորձում է դա դարձնել իր անձկություններից ազատագրող, միառժամանակ, գիտակցելով՝ «պատը» թվացյալ ազատությամբ է զայթակղում, թե խոսքը այն իրերի մասին է, որոնք գրողը տեսնում է: Իրականում Պրուստը խոսում է «պատից» իր «կախած իրի» մասին: Նյութեղեն արգելքը, որ առկա է Պրուստի և «իրի» միջև, ոչ թե կանխում է մտազննման մեծ ցանկությունը, այլ բորբոքում է այն: Նման մոգարգելքի, երբ մեր «գիտցածն» է արգելքի տակ դրվում, բայց այնպես ներկայացնելով, թե մենք ոչինչ «չգիտենք»՝ ինչ է այնտեղ տաքուացված:

Արգելվածը միշտ ցանկահարույց է, և դրանով է: որ «պատը»

թվացյալ ազատությամբ է գալթակղում: Չքանում է իրերի «դիմակին» ընդհարվող անհուսությունը: Տրամադրվում ես պատրանքի, թե քո մտազննումների մոգական մատը հավում է իրերի բուն էությանը, ոչ թե նրանց «դիմակային» պատվածքին: Վերլուծական մտքի անբավարարվածությունը լրացվում է լեզվական սպեկուլյատիվով՝ այնպիսի իրավիճակներում «լեզու խաղացնելու» միակ փրկությամբ, երբ թվում է զգացական նրբությունների հանդեպ լեզվով արծագանքելու ունակությունը մարել է: Կամ՝ գրականությունը ինքն է պահանջում պառուզա:

Մեկը մյուսին փութացնող բառերով՝ պատմողական շունչը ու այդ շնչի ետևից ոճը հմայող-հրապուրող, ոճը ինքն իրենով գոյացնող, կարծես, ասելիքը ընկել է դժվար լուծելի միացության մեջ ու քայքայվում է, ու այդ պրոցեսը անհնար է դադարեցնել, քանի դեռ ոճն ու ասելիքը չեն միալուծվել, չեն լուծույթվել այն փորձանոթում, որ գրողի շնչառությամբ է լցված [գրելը ջրի մեջ սուզվելու ու շունչ պահելու պես մի բան է. ու՛մ միտքն է]: Առանց երկար արտաշնչման Պրուստն ու Ֆոկլները այդ փորձանոթում են:

Որպեսզի մեկը մյուսին փութացնող բառերը կարողանան միմյանց փոխադարձ ամենահասություն ներշնչել, իրեն հեղձամահ անելով-խեղդելով, մաղձը բերանը հասցնելով է գրողը արտաշնչում թթվածին... Պրուստի ոճը չի հաճենում սոսկ եղածով: Ինչպիսի տարածականությամբ էլ նա «շնչի» ու չխոչընդոտի երևակայության հորձանքվող տարամիտումներին՝ ոճի հաճույքին խառնած աստվածային շփոթմունքը [կարծես թե՝ անփութությունը ...] գիտակցում է, որ ի վերջո, իր նրբաոճ լինելը մնում է թղթի վրա վերարտադրված «տապանագրային ինչ-որ շարակցություններ», այլ ոչ թե գրառված տեղից դեպի ընթերցողը արտազեղվող կենդանի շփում, ինչպես լինում է բանավոր խոսքի դեպքում:

Գրի այս ստատիկությունը հաղթահարելու գրողի մոգությունը մտածողության վրա թողնում է յուրատեսակ «սոսինձ», ինչպես մետաքսաորդերն են ունենում՝ տերևից կառչելու բացառիկ թեթևություն ցուցադրելով մեզ: Այսպես, մեծ դժվարությամբ է Պրուստի ոճը կառչում նյութից, բայց դա կրում է այնպիսի թեթևությամբ, որ մենք չենք զգում նյութի մեջ լեզվի լարվածությունը: